



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 28-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 28-ը Հայոց Բանակի կազմավորման օրն է:

Հարգելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիս Արցախյան ազատամարտից ծնունդ առած Հայոց Բանակի կազմավորման 28-րդ տարեդարձի առիթով:

Սահմանը պահող նվիրյալներ,

Ձեր սխրանքն անզի՛ն է:

Շնորհիվ ձե՛զ ու հանուն Հայրենիքի ընկած հերոս տղերքի, մենք այսօր ունենք հզոր ու օրեցօր արդիականացվող բանակ, շնորհիվ ձե՛զ, մենք կարող ենք ապրել խաղաղ երկնքի տակ ու արարել՝ որպես հպարտ ու արժանապատիվ Քաղաքացի:

Ծառայե՛ք արժանապատվորեն ու վերադարձե՛ք պատվով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ